ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2017թ օգոստոսի 30 N 164 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՇԵՆԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՆՈՐԱՇԵՆԻ Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՉՔՆԱՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՌՅԱ-ԹԱԶԱՅԻ Ա. ԱՎԴԱԼԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՄԻՋՆԱՏԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՎԱՐԴԵՆԻՍԻ Զ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԼԵՌՆԱՊԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՀՆԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՄԵԼԻՔԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ–728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Շենկանի հիմնական դպրոց>>, <<Նորոշենի Ռ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Վարդենուտի միջնակարգ դպրոց>>, <<Չքնաղի հիմնական դպրոց>>, <<Ռյա- Թազայի Ա. Ավդալի անվան միջնակարգ դպրոց>>, <<Միջնատան հիմնական դպրոց>>, <<Վարդենիսի Զ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Լեռնապարի միջնակարգ դպրոց>>, <<Հնաբերդի միջնակարգ դպրոց>>, <<Մելիքգյուղի միջնակարգ դպրոց>>, <<Լուսագյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2014-2016թթ համակարգի գնահատման աուդիտ բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ Սիրան Ասատրյանի, Ենոք Մինասյանի, Արթուր Կարապետյանի և աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններին, հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 35 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ավարտել հոկտեմբերի 20-ին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ